

ОБРАЗОВАНИЕ

Փոփոխությունները Հայաստանի նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգում 2005–2015 թթ.

Զարարյան Լ.Ս.,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտիտ /Հայաստան, Երևան/
E-mail: lilit_zakaryan@mail.ru

Վճռորոշ բաներ՝ նախնական և միջին մասնագիտական կրթություն, Կոպենհագենի հոշակագիր, միջազգայնացում, կրթության որակի ապահովում, ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Изменения в системе начального и среднего профессионального образования в Армении в 2005-2015 гг.

Закарян Л.С.,
Институт истории НАН РА (Армения, Ереван)
E-mail: lilit_zakaryan@mail.ru

Резюме: В советское время выпускники 86 начальных и 69 средних профессиональных учебных заведений обслуживали различные сферы экономики, образования и культуры по 127 специальностям. В 1990–ых годах резкий спад экономики отрицательно сказался и на профессиональном образовании. В 2001-2005 гг. начальные учебные заведения были ликвидированы, а их специальности формально были включены в учебные планы старших классов общеобразовательных школ. Однако в 2005 г. сектор был восстановлен и в 2006 г. уже существовало 28 таких заведений. Недоразвитость рынка труда, высокий уровень безработицы, закрепляемые в течении догого времени стереотипы снижали привлекательность этого сектора образования. Всвязи с новыми требованиями рынка труда изменился список лицензируемых специальностей. В 2004 г. Правительство РА утвердило «Стратегию начального (ремесленного) и среднего профессионального образования и обучения», а в 2005 г. был принят Закон РА «О начальном (ремесленном) и среднем профессиональном образовании». Концепция развития сектора, утвержденная в 2008 г. соответствовала принципам Копенгагской декларации, целью которой была евроинтеграция и повышение мобильности студентов. В 2009 г. Европейский Фонд Образования (ЕФО) выработал новый курс, который получил название Туринский процесс. С 2010 г. к Туринскому процессу присоединилась Армения и сектор вступил на новый этап реформирования. Глобальные изменения рынка труда изменили парадигму образования. Особую знаимость приобрела концепция обучения на протяжении всей жизни, интеграция сферы образования и рынка труда, упор не только на знания, но и на умения и профессиональные компетенции. Для осуществления пилотной программы из 110 средних профессиональных учебных заведений были выбраны 12, которые должны были стать многопрофильными колледжами и стать примером для остальных. За несколько лет была обогащена ресурсная база этих колледжей, открыты новые лаборатории, компьютерные классы, улучшены материальные условия. В 2008г. был создан Национальный центр профессионального образования и обучения. Центром были разработаны государственные стандарты начального и среднего профессионального образования и модульные учебные планы, проводилась переподготовка преподавателей. В том же году был основан Центр обеспечения качества профессионального образования РА. Вскоре были разработаны и утверждены Национальная рамка квалификаций (НРК), критерии и стандарты аккредитации. Предусматривается также внедрение Европейской системы переноса и накопления зачетных единиц, повышение самостоятельности учебных заведений, проведение институциональной и программной аккредитации. Реформирование данного сектора образования продолжается.

Ключевые слова: начальное (ремесленное) и среднее профессиональное образование, Копенгагская декларация, Туринский процесс, обеспечение качества образования, институциональная аккредитация.

Changes in the system of the preliminary and vocational professional education in Armenia in 2005-2015

Zakaryan L.S.
Institute of History of NAS of RA (Armenia, Yerevan),
lilit_zakaryan@mail.ru

Abstract: During the Soviet period the graduates of 86 preliminary schools and 69 vocational professional institutions in 127 specialities served in different spheres such as economy, education and culture. In the 1990's the abrupt economic decline had its negative influence also on professional education. In 2001-2005 preliminary educational

institutions were liquidated, and their specialities were officially included in the curricula of senior classes of the schools of general education. However, in 2005 the sector was restored and in 2006 28 such institutions already existed. The under developed labors market, the high level of unemployment, the deeply-rooted stereotypes decreased the attractiveness of this sector. With the new requirements of the labor market the list of licensed specialities changed. In 2004 the Government of the Republic of Armenia adopted “The strategy of the preliminary and middle professional education and learning”, and in 2005 the RA law on “Preliminary and Middle Level Professional (Vocational) Education” was adopted. The concept on the development of the sector approved in 2008 was in compliance with the principles of the Copenhagen Declaration. Its aim was the integration to Europe and strengthening of mobility of the students. In 2009 the European Fund of Education (EFE) launched a new course called the Turin Process. Armenia has joined the Turin process since 2010 and the sector entered into a new stage of reforms. Global changes of the labor market changed the paradigm of education. The concept of lifelong learning, integration of education and labor market, emphasising not only knowledge but also skills and professional competencies gained great significance. In the framework of the pilot programm 12 vocational professional institutions out of 110 were selected, which were to become multisectoral colleges and set an example for others. Within a few years the resources of the colleges were improved: new laboratories and computer classes were opened and the technical equipment enhanced. In 2008 the National Center for Professional Education and Learning was created. The center developed state standards for preliminary and vocational professional education and moduls, and trained the teaching staff. In the same year the National Center for Professional Education Quality Assurance was established. Shortly, the National Qualifications Framework (NQF) and accreditation standards were developed and approved by the Government. Subsequently, the implementation of the ECTS is envisaged, conduct institutional and programm accreditation, as well as increase the independence of educational institutions. The reforms in this sector of education still continues.

Keywords: preliminary and vocational professional education, Copenhagen Declaration, Turin Process, quality assurance, institutional accreditation.

Խորհրդային շրջանում նախնական և միջին մասնագիտական հաստատությունները տեխնիկումներն ու ուսումնարանները, կադրեր էին թողարկում մեծաքանակ արդյունաբերական ձեռնարկությունների և ոչ արդյունաբերական ոլորտների՝ գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի, կապի ծառայությունների, սպասարկման ոլորտի, առողջապահության, կրթության համար:

1991 թ. Հայաստանում գործում էր 86 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն (21881 ուսանողով) և 69 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (40600 ուսանողով): Նախնական և միջին ուսումնական հաստատությունների ուսանողների քանակը գրեթե հավասար էր բուհերի ուսանողների քանակին (66079)¹: 1991 թ. Հայաստանում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները մասնագետներ էին պատրաստում 127 մասնագիտություններով:

1990-ականների թվականներին տնտեսության սրնթաց անկումը, կրթությանը հատկացվող ռեսուրսների սահմանափակությունն իրենց բացասական ազդեցությունը թողեցին նաև մասնագիտական կրթության վրա: 1993 թվականին ՀՆԱ-ն 1989 թվականի համեմատությամբ կրճատվել էր 60%-ով: Կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման

բացարձակ չափը շատ փոքր էր, կրթության մասնաբաժինը կազմում էր ընդհանուր բյուջեի շուրջ 11%-ը, որը զգալիորեն ցածր էր միջազգային ցուցանիշներից: Նույնիսկ կրթության զարգացման պետական ծրագրում էր նշվում, որ «Համակարգը ֆինանսավորվում է իրական պահանջարկից զգալիորեն պակաս: Այսպես, վերջին տարիներին կրթության պետական ֆինանսավորումը տատանվում է ՀՆԱ-ի 2-2,5 տոկոսի շրջանակներում, որը կազմում է միջազգային ցուցանիշի մոտավորապես կեսը»:² Վիճակը չփոխեց նաև ՄԿՈՒ համակարգում 1992 թվականից ներմուծված վճարովի ուսուցման համակարգը: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում անվճար տեղերի համար ընդունելության քննությունները սկսեցին անցկացվել մրցութային հիմունքներով, իսկ վճարովի տեղերի համար՝ առանց մրցութի³:

2001թ. նախնական մասնագիտական կրթությունն իրականացվում էր 56 մասնագիտական տեխնիկական ուսումնարաններում (2121 աշակերտ) և միջնակարգ հանրակրթական դպրոցների ավագ դպրոցի արհեստ

¹ ՀՀ ԱԿԾ տվյալներով:

² Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001- 2005 թվականների պետական ծրագիր, էջ.1 <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1422&lang=arm#1>

³ Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում արձանագրված առաջընթացի գնահատում, Միլենա Կորադինի, Թուրին, սեպտեմբեր 2010թ., էջ 8:

տագործական հոսքերում (2373 աշակերտ): Ընդհանուր առմամբ նախնական մասնագիտական կրթություն էր ստանում 4494 սովորող՝ վճարովի և անվճար հիմունքներով⁴: 2001-2005թթ. նախնական ուսումնական հաստատությունների աշխատանքը կասեցվեց, դրանք ձևափոխվեցին կամ ձուլվեցին միջնակարգ դպրոցների հետ, որոնք որոշ ժամանակ պահպանում էին մասնագիտական հոսքերը, սակայն չէին տրամադրում մասնագիտական որևէ որակավորում, այնուհետև մեծ մասամբ դրանք վերացվեցին: 1999թ. ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում նշվում էր, որ նախնական մասնագիտական կրթության նպատակը սովորողներին հիմնական ընդհանուր կրթության հիման վրա նախնական մասնագիտական որակավորման համար պատրաստելն է և նշվում, որ այն «իրականացվում է ավագ դպրոցների արհեստագործական հոսքերում, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ուսումնարտադրական կենտրոններում»: 2003 թվականին օրենքում փոփոխություններ կատարվեցին և նշվեց, որ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունն իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում», որից հետո 2005թ. նախնական մասնագիտական կրթական համակարգը սկսեց վերականգնվել: 2006թ. տվյալներով համակարգը ներառում էր 28 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն (արհեստագործական ուսումնարաններ), որոնցում սովորում էր 4095 ուսանող⁵: Կրթության այդ ոլորտում ընդգրկված էր 2027 աշխատող, այդ թվում՝ արտադրական ուսուցման վարպետներ և մանկավարժներ:

Նույն տարիներին միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների թիվը գնալով աճեց: 1995 թ. արդեն կար 72 պետական ՄՄՈւՀ, դրանց թվին ավելացան նաև 7 ոչ պետականներ: Միջին մասնագիտական ուսումնական

հաստատություններում ներգրավված էր շուրջ 5180 մանկավարժ: Չնայած միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների թվի աճին, նրանցում սովորողների քանակը նվազում էր: Այսպես, եթե 1991 թ. ՄՄՈւՀ-երում սովորում էր 40600 ուսանող, ապա 1995 թ.՝ 21100 ուսանող պետական ՄՄՈւՀ-երում և 1300՝ ոչ պետական⁶: Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների թիվը հետագա տարիներին աճեց, սակայն 2005 թվականից հետո դարձյալ նվազման միտում ցուցաբերեց (եթե 2005թ. այն կազմում էր 2981, ապա 2010 թ.՝ 1653, իսկ 2015 –ին՝ 1563): Նույն ժամանակահատվածում այդօրինակ հաստատությունների թիվը նույնպես կրճատվեց՝ 28-ից հասնելով 16-ի⁷:

Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և նրանցում սովորող ուսանողների թվաքանակը 1991- 2015 թթ.

	1991	1995	2000	2005	2010	2015 ⁸
ՄՄՈւՀ-ների քանակը	86	83	56	0	28+16	25+19
Սովորողների թվաքանակը	21881	11040	5122	0	6393	6900
ՄՄՈւՀ-ների քանակը, ա.թ.	69	79	105	111	101	97
Պետական	69	72	75	83	81	81
ոչ պետական	0	7	30	28	20	16
Սովորողների թվաքանակը, ա.թ.	40600	22400	28679	30818	29575	24300
Պետական		21100	26870	27837	27922	22737
ոչ պետական		1300	1809	2981	1653	1563

Փոփոխվեց ոչ միայն ուսումնական հաստատությունների քանակը, այլ նաև շուկայի

⁶ Նույն ժամանակաշրջանում հատկապես աճում էր բուհերի ուսանողների թիվը: Այսպես, եթե 1995 թ. բուհերում սովորում էր 39375 ուսանող, ապա 2000 թ.՝ 60726, 2005թ.՝ 97765, 2009 թ.՝ 114629: 2009 թ.-ից հետո բուհերի ուսանողների թվաքանակը սկսեց նվազել:

⁷ ՀՀ ԱԿԾ տվյալներով:

⁸ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2015թվականին և դինամիկ շարքեր (2011 - 2015), վիճակագրական ժողովածու, 2016, էջ 130, 153:

⁴ Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում արձանագրված առաջընթացի գնահատում, Միլենա Կորադինի, Թուրին, սեպտեմբեր 2010թ., էջ 11:

⁵ ՀՀ ԱԿԾ տվյալներով:

նոր պահանջներով պայմանավորված մասնագիտությունների ցանկը: Առաջացան նոր մասնագիտություններ, կապված, օրինակ՝ թանկարժեք քարերի վերամշակման և թանկարժեք զարդերի արտադրության, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների, ֆինանսների, ապահովագրության ու զբոսաշրջության հետ:

2004թ. Հայաստանը ԵՄ SUUFU ծրագրի օժանդակությամբ ներգրավվեց մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի բարեփոխումների և արդիականացման գործընթացի մեջ: 2004թ. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվեց «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը», որով սահմանվեցին ոլորտի նպատակներն ու խնդիրները, մշակվեց և 2005թ. հուլիսի 8-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին»: Օրենքով նախատեսվեցին նոր մոտեցումներ, այդ թվում՝ որակի գնահատում և որակի երաշխավորում, հաստատությունների կառավարման նոր մարմնի (ուսումնարանի/քոլեջի խորհրդի) հիմնում, կրեդիտային համակարգի ներդրում և սոցիալական գործընկերության հաստատում: Վերականգնվեց նախնական մասնագիտական ոլորտը: Հաստատվեց նաև «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման գերակայությունները և 2005-2008թթ. գործողությունների պլանը»:

ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի նիստի N 51 արձանագրային որոշմամբ մշակվեց «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգը»: Հայեցակարգը համապատասխանում էր Կոպենհագենի հռչակագրի դրույթներին: Հայեցակարգում նախանշվեցին ոլորտի հիմնախնդիրները և 2009-2011 թթ. համար քաղաքականության հիմնական ուղղությունները: Հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական պայմանները գերակա համարվեցին այն ուղղությունները, որոնք քիչ ռեսուրսների ներդրմամբ առավել կարճ ժամանակահատվածում առավել մեծ արդյունք կարող էին ապահովել: Հայեցակարգով նախատեսվում էր

նպաստավոր միջավայր ստեղծել ոլորտի բարեփոխման համար, շեշտադրվում տնտեսության և աշխատաշուկայի կարիքների հաշվառման անհրաժեշտությունը, կարևորվում սոցիալական անհավասարության ու հանրապետության մարզերի անհամաչափ զարգացման մեղմումը⁹: Ոլորտի զարգացման համար կարևորվեց միջազգայնացումը, ինչը անհրաժեշտ էր, ինչպես նշվում էր հայեցակարգում՝ «շարունակաբար նորացվող գիտելիքի համաշխարհային շտեմարանից օգտվելու, առկա գիտելիքը, փորձը արագորեն տեղայնացնելու, իսկ տեղական գիտելիքն ու նորարարությունը միջազգայնացնելու համար»¹⁰: Բարեփոխումներն արագացնելու համար բոլոր մարզերում պետք է ստեղծվեին գերազանցության օջախներ, որոնք պետք է ստանձնեին «բարեփոխումների առաջնորդի և տարածողի դերը»¹¹: Դրանք պետք է փոխկապակցված լինեին միմյանց և արտերկրի քոլեջների հետ:

Հայեցակարգով նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի միասնական եվրոպական կրթական տարածքին ինտեգրելու համար անհրաժեշտ համարվեց ՄԿՈՒ որակավորումների համակարգը համապատասխանեցնել որակավորումների եվրոպական շրջանակին, զբաղմունքների դասակարգչին, մասնագիտությունների որակավորման բնութագրերին, ներդնել կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգ, բարձրացնել համակարգի մասնագետների տեղեկացվածությունը օտարերկրյա երկրների փորձի վերաբերյալ, հետևել Կոպենհագենի գործընթացին, օժանդակել ՄԿՈՒ հաստատությունների ցանցավորմանը: Հայեցակարգով նախատեսվում էր ուսումնառություն ռոջ կյանքի ընթացքում, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների ճանաչում: Հայեցակարգը իրագործելու համար հաստատվեց նաև «Հայաստանում մասնագիտական կրթության բարեփոխումների 2009-

⁹ Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգը հաստատվել է 2008 թվականի դեկտեմբերի 18-ի նիստի N 51 արձանագրային որոշմամբ:

¹⁰ Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգ, 2008 թ., էջ 4:

¹¹ Նույն տեղում, էջ 7:

2011թթ. միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը», որով ՄԿՈւ ոլորտի ֆինանսավորումը կարգավորելու և կառավարումը բարելավելու համար նախատեսվում էր ուսումնասիրել միջազգային փորձը ՄԿՈւ հաստատությունների լրացուցիչ եկամուտներ ստանալու ուղղությամբ և ադապտացնել այն Հայաստանի պայմաններին: Նախատեսվում էր մասնագիտական կրթության և ուսուցման կարողությունամետ չափորոշիչների ներդրում, ինչի համար պետք է վերանայվեր ՀՀ կառավարության «Կրթության պետական չափորոշիչների մշակման ու հաստատման ընթացակարգը հաստատելու մասին» N 1079-Ն որոշումը (08.08.2003թ.), փոփոխություններ կատարվեր «Կրթության մասին» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում:

Միջին մասնագիտական ոլորտում նախատեսված ծրագրերը իրականացնելու նպատակով Եվրամիությունը 34.5 միլիոն Եվրոյի չափով դրամաշնորհներ տրամադրեց: Կրթության ոլորտում սկսվել էր միջազգայնացման նոր փուլ: Դեռևս 2002 թ. նոյեմբերի 29-30 Եվրոպական երկրների կողմից ընդունվել էր Կոպենհագենի հռչակագիրը, որն Եվրոպայի մասնագիտական կրթության ոլորտում համագործակցության նոր ուղենիշներ էր դրել: Դրա նպատակն էր եվրաինտեգրումը, կրթության որակի բարձրացումը, ուսանողների շարժունության ապահովումը, Եվրոպական մասնագիտական կրթության մրցունակության բարձրացումը:

20-րդ դարավերջից աշխատաշուկայում գլոբալ փոփոխություններ էին տեղի ունեցել և մասնագիտական պատրաստման հարացույցը փոխվել էր: Այժմ աշխատաշուկան թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակային առումով այնքան արագ էր փոփոխվում, որ մասնագիտական ուսումնական հաստատությունները չէին հասցնում արձագանքել դրան: Միայն ուսումնական հաստատությունով ուսումը սահմանափակելն արդեն հնարավոր չէր: Առաջ քաշվեց «կրթություն ամբողջ կյանքի ընթացքում» գաղափարը, որի հիման վրա ՀՀ կառավարությունը 2009թ. հոկտեմբերին ընդունեց ցկյանս ուսումնառության հայեցակարգը: Այն սահմանում էր ամբողջ կյանքի ընթացքում ուսումնառության սկզբունքները,

ներկայացնում այս ասպարեզում առկա հիմնական խնդիրներն ու հնարավոր լուծումները: Մակայն փաստաթուղթը ոչ միայն լայն կիրառում չստացավ, այլև կրթական հանրության մեծ մասին անձանոթ մնաց:

2009թ. Եվրոպական կրթության հիմնադրամը նոր կուրս մշակեց, որը ստացավ «Թուրինի գործընթաց» անվանումը: 2010 թ. այն մեկնարկեց Հայաստանում¹²: Դրա նպատակն էր մասնագիտական կրթությունն ու ուսուցումը մասնակցային դարձնելով ամբողջովին ՄԿՈւ ոլորտում իրականացվող բարեփոխումները և դրանց գնահատելու կարողությունները այն երկրների համար, որոնք ներառված չէին Կոպենհագենի գործընթացում: Թուրինի գործընթացն իրականացվելու էր ԵԿՀ-ի աջակցությամբ (երկու տարին մեկ կրկնվող գնահատումներով): Վերլուծության էր ենթարկվում մասնագիտական կրթության ոլորտի քաղաքականությունը, զարգացման ուղին, բարեփոխումները, դրական փորձը, խոչընդոտները: Դրա հիման վրա պետք է որոշվեին համագործակցության ուղիները և աջակցության կարիք ունեցող ոլորտները:

Թուրինի գործընթացի շրջանակում բարեփոխումների առաջին գնահատումը արդեն ցույց տվեց, որ թեև կրթության կազմակերպման ուղղությամբ նկատվում է որոշակի աշխուժացում և որոշ չափով ռեսուրսներ են հատկացվում, սակայն միջին մասնագիտական կրթությունը և ուսուցումը (ՄԿՈւ) գերակայություն չէին, և այս ոլորտի բարեփոխումները պայմանավորված էին հիմնականում Եվրոպական դոնորների աջակցությամբ: Որոշակի անջրպետ էր նկատվում աշխատաշուկայի պահանջների և մասնագիտական կրթության առաջարկի միջև: ՄԿՈւ համակարգում ուսուցումը դեռևս մնում էր տեսական և բավականաչափ ձկուն չէր:

Աշխատաշուկայի թերզարգացվածությունը, գործազրկության բարձր մակարդակը, հասարակության մեջ տասնամյակներ շարունակ ամրապնդվող կարծրատիպերը ՄԿՈւ համակարգը բարձրագույնի համեմատությամբ սակավ գրավիչ էին դարձնում: Չէին նպաստում դրան նաև աշխատաշուկայում ձևավորված խաղի կանոնները: Այսպես,

¹² Տես՝ Թուրինի գործընթացի Հայաստանի էջը. <http://www.etf.europa.eu/web.nsf/pages/Armenia>

«Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում արձանագրված առաջընթացի գնահատում» զեկույցում նշվում էր. «Թեպետ բուհերի շրջանավարտների ֆորմալ որակավորումը շատ հաճախ գերազանցում է այս կամ այն աշխատատեղի պրոֆիլի պահանջները, սակայն գործատուները նախապատվությունը տալիս են նրանց՝ բուհերում չսովորածներին, մասնավորապես՝ նախնական և միջին ՄԿՈՒ հաստատությունների շրջանավարտների որակի անկման կամ արագ արձագանքելու կարողության բացակայության պատճառով: Իրականում բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում գործազրկության մակարդակը փոքր-ինչ ավելի ցածր է (28%), քան միջինը»:¹³

2008-2009 ուսումնական տարում նախնական մասնագիտական հաստատություններ ընդունվել էր հիմնական ընդհանուր կրթություն ստացածների 5%-ը (թեպետ և այն անվճար էր), իսկ միջին մասնագիտական՝ 21%: Միջին մասնագիտական ոլորտը ֆինանսավորվում էր հետևյալ կերպ՝ 25% պետության կողմից՝ անվճար տեղերի հատկացման միջոցով, և 75% սովորողների կողմից՝ ուսման վճարների միջոցով, կազմելով ուսումնական հաստատությունների արտաբյուջեն¹⁴:

Ֆինանսական սղության պատճառով նախնական և միջին մասնագիտական հաստատությունների ռեսուրսային բազան (շենքերը, նյութատեխնիկական բազան) անմխիթար վիճակում էր, ուսումնառության համար անհրաժեշտ պայմանները հաճախ չէին ապահովվում: Վիճակը հատկապես բարդանում էր ձմեռվա ամիսներին, երբ սովորական դարձաց բազմաթիվ խնդիրներին զումարվում էր նաև ջեռուցման հարցը: Ինչպես նշվում էր զեկույցներից մեկում՝ ՄԿՈւ ուսումնարանների/քոլեջների մեծ մասը վերջին 20 տարիների ընթացքում զուրկ են եղել ջեռուցման համակարգից, ուստի ստիպված են եղել դասերը դադարեցնել տարվա ամենացուրտ եղանա-

կին՝ դեկտեմբերից փետրվար ընկած ժամանակահատվածում¹⁵:

Եվրամիությունը ակտիվացրեց իր գործունեությունը և 2006 թվականից սկսեց զբաղվել այդ խնդիրներով Ոլորտային քաղաքականության ծրագրի միջոցով: Ծրագիրը ուղղված էր աղքատության կրճատմանը՝ նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտներում բարեփոխումների իրականացման ճանապարհով: Այդ ծրագրով 16 միլիոն եվրո կազմող դրամաշնորհ տրվեց Հայաստանին¹⁶:

Միջոցներ էին հատկացվել ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգման, ռեսուրսային բազայի բարելավման, չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակման համար: Ակնկալվում էր, որ պետական բյուջեից կրթությանը հատկացվող գումարները նույնպես կաճեն, 2015թ. Հասնելով 4%-ի¹⁷, իսկ մինչև 2021թ.՝ 4.5%-ի՝ այնուամենայնիվ բավականին ցածր մնալով ԵՄ միջինից, որը կազմում է 5%:¹⁸

2009 թ. մայիսին ՀՀ Կառավարությունը հաստատեց «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը»: Փաստաթղթով նախատեսվեց սոցիալական գործընկերության չորս մակարդակ՝ ազգային, տարածաշրջանային, ոլորտային և ինստիտուցիոնալ: Փաստաթղթի համաձայն պետք է ակտիվանար մասնագիտական ուսումնական հաստատություն – գործատու կապը: Որպես այդ քաղաքականության հաջորդ քայլ ՀՀ ԿԳՆ-ի, Հայաստանի գործատուների հանրապետական միության և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի միջև 2009 թ. կնքվեց փոխ-

¹³ Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում արձանագրված առաջընթացի գնահատում, Միլենա Կորադինի, Թուրին, սեպտեմբեր 2010թ., էջ 11:

¹⁴ Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում արձանագրված առաջընթացի գնահատում, Միլենա Կորադինի, Թուրին, սեպտեմբեր 2010թ., էջ 8:

¹⁵ Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում արձանագրված առաջընթացի գնահատում, Միլենա Կորադինի, Թուրին, սեպտեմբեր 2010թ., էջ 15

¹⁶ Եկամտի ստեղծման մոդել Հայաստանի Հանրապետության ընդհանուր առաջին համար/2009 թ./ ուսումնարանների և քոլեջների համար/2009 թ./

¹⁷ Իրականում բյուջեում կրթությանը հատկացվող միջոցները նվազեցին: 2014 թ. հանրային ծախսերը կրթության 2014 թ. 2009 թ.-ի համեմատությամբ կրճատվեցին 13,45%-ից 9,37%-ի /Թուրինի գործընթաց, 2016, էջ 1/:

¹⁸ Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում արձանագրված առաջընթացի գնահատում, Միլենա Կորադինի, Թուրին, սեպտեմբեր 2010թ., էջ 7:

ըմնոնման հուշագիր նախնական մասնագիտական (արհեստակցական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում համագործակցության մասին: Փաստաթղթով սահմանվեցին մասնագիտական կրթության նախնական և միջին օղակներում ուսումնական հաստատությունների զարգացման գործում գործատուների միությունների մասնակցության բնագավառներն ու ուղիները:

ՀՀ կառավարության 2009թ. մայիսի 7-ի նիստի N 19 արձանագրային որոշմամբ ՄԿՈւ – գործատու - արհմիություն սոցիալական գործընկերությունն ապահովելու նպատակով ՄԿՈւ ուսումնական հաստատություններում ձևավորվեցին կոլեգիալ կառավարման մարմիններ՝ Խորհուրդներ (ՄԿՈւՀԽ): ՀՀ ԿԳ նախարարի 2011 թ. փետրվարի 24-ի N 124-Ն հրամանով հաստատվեց ՄԿՈւՀԽ կազմման կարգը, որի համաձայն Խորհրդի կազմում պետք է ընդգրկվեին անդամներ հաստատության մանկավարժական կազմից (Խորհրդի անդամների 20%-ը), ուսանողական խորհրդից (25%-ը): Հիմնադիրը կամ հիմնադրի լիազորմամբ տարածքային կառավարման պետական մարմինն առաջադրում էր Խորհրդի անդամների 10%-ը: Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջադրմամբ Խորհրդի կազմում ընդգրկվելու էին պետական պաշտոն զբաղեցնող, գիտության, մշակույթի և տնտեսական տարբեր ոլորտների ներկայացուցիչներ (10%), սոցիալական գործընկերներ (25%), տարածքային զբաղվածության ծառայության ներկայացուցիչներ (10%):

Որպես գերազանցության կենտրոններ Հայաստանի միջին մասնագիտական կրթություն իրականացվող 110 ուսումնական հաստատություններից ընտրվեցին 12 պետական ուսումնական հաստատություններ, որոնք պետք է դառնային բազմագործառնության (փորձարարական) քոլեջներ և օրինակ ծառայեին տարածաշրջանի մյուս քոլեջների համար: Այդ քոլեջների ռեսուրսային բազայի բարելավման ուղղությամբ մեծ աշխատանք իրականացվեց. բացվեցին լաբորատորիաներ, համակարգչային լսարաններ, բարելավվեցին շենքային պայմանները:

Բարեփոխումների առաջին փուլի արդյունքում հստակեցվեց միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցան-

կը, հաստատվեցին միջին մասնագիտական կրթության պետական չափորոշիչները, հաստատվեց միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը: Դրա հետ մեկտեղ բարեփոխումների արդյունավետության գնահատման արդյունքում բացահայտվեցին խոչընդոտներն ու թերությունները: Բարեփոխումների արդյունավետության համար խոչընդոտող հանգամանք էր օրենսդրության անկատարությունը, օրենքների իրականացման համար ենթաօրենսդրական ակտերի և մեխանիզմների բացակայությունը: Ընդգծվեց, որ չի ապահովվում ՀՀ «Կրթության մասին» օրենքով հռչակված կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն (*4-րդ հոդված, 1-ին կետ*): Այդ ամենը ՀՀ մասնագիտական կրթության այդ ոլորտը անմրցունակ էին դարձնում զարգացած երկրների կրթության համակարգերի համեմատությամբ: Նոր կրթական և տեղեկատվական տեխնոլոգիաները դանդաղ էին մուտք գործում կրթության համակարգ: Միջազգային ինտեգրմանը խոչընդոտում է օտար լեզուների (հատկապես անգլերենի) չտիրապետելը թե ուսանողության, թե դասախոսական կազմի մեծամասնության կողմից:

Սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ միջին մասնագիտական կրթության դիպլոմ ստացած երիտասարդների թիվն ու տոկոսը նվազել են: Թեպետ որոշ մասնագիտությունների գծով շուկայում պահանջարկը մեծ է, սակայն այդ մասնագիտություններ ձեռքբերողների տոկոսը՝ ցածր: Այսպես, տեխնիկական աշխատողները կազմում են երիտասարդների ընդհանուր զբաղվածության 9.7%, արհեստագործներն ու հարակից մասնագիտությունների աշխատողները՝ 12.1%, հաստոցավարներն ու մեխանիկները՝ 3.2%: Գործազուրկ երիտասարդների միայն 0.1 տոկոսն է աշխատանք փնտրում գյուղատնտեսական աշխատանքների, և միայն մի փոքր ավելին՝ 0.6 տոկոսը՝ արդյունաբերական (ինչպես օրինակ հաստոցավարներ ու մեխանիկներ) ոլորտում¹⁹, թեպետ

¹⁹ Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց անցումն աշխատաշուկա Նիկոլաս Սերիեր Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Ժնև, 2014, էջ 15

հենց այդ ոլորտներում որակյալ աշխատուժի պակաս է զգացվում: Միջին մասնագիտական կրթությունն ստացած երիտասարդների շրջանում գործազրկության ցուցանիշը շատ բարձր է²⁰:

2008թ. նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում բարեփոխումներին աջակցելու, դրանք առավել արդյունավետ դարձնելու համար ստեղծվել էր «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկը (ՄԿՈԻԶԱԿ): ՄԿՈԻԶԱԿ-ը պետք է աջակցեր ՄԿՈՒ մակարդակում Որակավորումների ազգային շրջանակի ներդրմանը, նպաստեր Հայաստանի Հանրապետությունում «ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» սկզբունքի ներդրմանն ու լայն տարածմանը, աջակցեր պետական կրթական չափորոշիչների և այլ ծրագրերի մշակմանը: 2007, 2009, 2012 թթ. մշակվեցին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների չափորոշիչները և մոդուլային ուսումնական պլանները: 2011թ. հոկտեմբերին հաստատվեցին արհեստագործական ուսումնարանի, պետական քոլեջի և տարածաշրջանային պետական քոլեջի նոր օրինակելի կանոնադրությունները և բոլոր արհեստագործական ուսումնարանները հանձնվեցին ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանը:

2011 թ. հաստատվեց Որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ) և մասնագիտությունների նորը ցանկը: ՈԱՇ-ի 4-րդ մակարդակը համապատասխանում է նախնական մասնագիտական կրթությանը, 5-րդը՝ միջին մասնագիտականին²¹: Նույն 2011 թ. ՀՀ կառավարությունը հաստատեց միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման կարգը

²⁰ Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց անցումն աշխատաշուկա Նիկոլաս Սերիեր Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Ժնև, 2014, էջ 19

²¹ ՈԱՇ-ի 3-րդ մակարդակը պետք է համապատասխաներ նախնական ՄԿՈՒ-ին առանց միջնակարգ ընդհանուր կրթության:

(նախնական մասնագիտական հաստատությունների վրա այն չի տարածվում), ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները: Հավատարմագրման կարգով բոլոր միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները մինչև 2018 թ. դեկտեմբերի 30 պետք է հայտ ներկայացնեն ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար (կարգի համաձայն ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարտադիր է, իսկ ծրագրայինը առայժմ կամավոր)²²:

ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 4-ի նիստի N 27 արձանագրային որոշման համաձայն հաստատվեց «Մասնագիտական կրթության և ուսուցման 2012-2016 թվականների բարեփոխումների ծրագիրը»: Ծրագիրն ուղղված էր ապահովելու մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի արձանագրված ձեռքբերումների և 12 տարածաշրջանային քոլեջների փորձի զարգացումը և ընդլայնումը: Ծրագրով նախանշվեցին ոլորտի զարգացման նպատակները և խնդիրները, կարևորվեց ՄԿՈՒ համակարգի ինտեգրումը եվրոպական մասնագիտական կրթական տարածքին, համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը, ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության ընդլայնումը:

Կոպենհագենյան գործընթացով նախատեսվել է կրեդիտային համակարգ ներդնել նաև միջին մասնագիտական կրթության ոլորտում: Այդ նպատակով 2014-2015 թթ. ուսումնական տարվանից որոշ մասնագիտությունների գծով փորձնական կրեդիտային համակարգ ներդրվեց որոշ պետական քոլեջներում: 2017 թ. տվյալով մշակված են Ն(Ա)ՄՄԿ մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական 167 չափորոշիչներ, համապատասխան ուսումնական պլաններ ու մոդուլային ծրագրեր, տարիներ շարունակ ՀՀ Կրթության և գիտության նախարարության Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը և Ուսուցման ազգային հիմնադրամը վերապատրաստումներ են իրականացրել ուսումնական հաստատությունների տնօրենների,

²² Նշենք, որ բուհերի հավատարմագրման գործընթացը մեկնարկեց 2012 թ., իսկ քոլեջներից դեռ որևէ մեկը չի հավատարմագրվել:

տնօրենների տեղակալների, կոլեգիալ կառավարման խորհրդի անդամների, դասախոսների համար: Վերջին տարիներին այդ ուղղությամբ իր աշխատանքն է ակտիվացրել նաև «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՈԱԱԿ-ը): Մեծաքանակ ուսումնական հաստատությունների հավատարմագրումը անցկացնելու համար ՈԱԱԿ-ը սկսել է ձևավորել փորձագետների բազա և լայնածաված վերապատրաստումներ անցկացնել քոլեջներում որակի ապահովման համակարգեր ներդնելու և զարգացնելու ուղղությամբ: Այսինքն լավ հիմք է ստեղծվել հետագա բարեփոխումների համար:

Խնդիր է դրված բարելավել կրեդիտային համակարգը բարձրագույն կրթության ոլորտում և ներդնել այն միջին մասնագիտական կրթության ոլորտում այնպես, որ ապահովվի ՈԱՇ-ի 5-րդ և 6-րդ փուլերի միջև կրեդիտների փոխանցելիությունը և կրթության շարունակականության ապահովումը: Այդ գործընթացները ինքնին անհնար են առանց մասնագիտական ուսումնական հաստատությունների ինքնուրույնության աճի: Մոտ ապագայում մշակվելու են նաև Որակավորումների սեկտորալ շրջանակները, որոնք կհեշտացնեն մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից մասնագիտության կրթական ծրագրերի մշակումը, նմանատիպ եվրոպական ծրագրերի հետ դրանց համադրելիության ապահովումը: Շուտով կհաստատվի նաև Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման 2017-2021 թվականների բարեփոխումների ծրագիրը, որը ընդհանուր առմամբ համապատասխանում է 2014-2025 թթ. Հեռանկարային ծրագրի թիրախներին և նպատակներին: Ըստ ծրագրի գյուղատնտեսությունը ճանաչվել է գերակա ոլորտ «արտահանումների մեծացման, Հայաստանի տնտեսության դիվերսիֆիկացման և տարածաշրջանային համաչափ զարգացում ապահովելու տեսանկյունից»²³: Ուստի առաջիկայում հատկապես մեծ ուշադրության են արժանանալու գյուղատնտեսական քոլեջները: Դրանցից 4-ում CEDEFOP-ի օժանդակությամբ որակի ապահովման համակարգեր են ներդրվելու և դրանք հավանաբար կլինեն այն քոլեջներից, որոնք առաջինները կանցնեն ինստիտուցիոնալ հավատարմագրում: Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի օժանդակությամբ որակի ապահովման համակարգեր են ներդրվում ավելի քան 60 քոլեջներում: Այսպիսով, մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումները առաջիկա տարիներին շարունակվելու են:

²³ Թուրինի գործընթաց, 2016, էջ 1: